



ՀՀ բնապահպանության նախարարություն



Empowered lives.
Resilient nations.

«ԿԱՆԱԶ» ԳՆՈՒՄՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ա Շ Խ Ա Տ Ա Ժ Ո Ղ Ո Վ

Էներգետիկ կառավարման հիմունքները, լուսավորության ժամանակակից համակարգերի նախագծման առանձնահատկությունները, «կանաչ» գնումների հնարավորությունները Հայաստանի համայնքներում

Արսեն Կարապետյան

«Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՖ/00074869
ծրագրի շինարարական նորմերի և ստանդարտների գծով
փորձագետ



07 հուլիսի 2017թ.

«Կանաչ գնումներ»-ի սահմանումը

- Այն սահմանվում է գնման առարկա հանդիսացող այնպիսի ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների նկատմամբ, որոնք ունեն **դրական կամ նվազ բացասական ազդեցություն շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա**, ի համեմատ այլ մրցակցող գնման առարկաների, որոնք ծառայում են այդ նույն նպատակին:
- Կանաչ Գնումները = Շրջակա միջավայր + Գին + Արդյունավետություն

Եվրոպական Միության առնչվող փաստաթղթեր

- ԵՄ երկրներում հանրային «կանաչ» գնումները ներառվել են «Եվրոպա 2020» ռազմավարությունում
- Կանոնակարգ No 106/2008: Energy Star Regulation (2008)
- Դիրեկտիվ 2010/30/EU: Energy Labelling Directive (2010)
- Դիրեկտիվ 2012/27/EU: Energy Efficiency Directive (2012)

Հայաստանի Հանրապետության և համայնքների ստանձնած մի շարք միջազգային պարտավորություններ

- 1994թ. ՀՀ-ն ստորագրել է Էներգետիկ խարտիայի պայմանագիրը:
- 2014 թ. Երևանի քաղաքապետարանը, ինչպես նաև ևս 14 քաղաքային համայնքներ միացել են Կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված ԵՄ «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը:
- 2015թ. հունվարի 2-ին ուժի մեջ է մտել Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) Հայաստանի անդամակցության պայմանագիրը:
- 2016թ. ՀՀ ստորագրել է ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության փարիզյան համաձայնագիրը:
- Կայուն Ջարգացման Նպատակներ (թիրախ 12.7 Խթանել պետական գնումների կայուն գործելաոճեր՝ համաձայն ազգային քաղաքականությունների և գերակայությունների):

Հայաստանում «Կանաչ գնումներ» խրախուսելու գործընթացը

- Հանրային գնումների ոլորտը ՀՀ-ում կարգավորվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-206-Ն), որն ուժի մեջ է մտել 2011 թ. հունվարի 1-ին:
- Գործնականում սակայն, հանրային գնումների ոլորտում **չի սահմանված որևէ գործիք կամ չափորոշիչ** կանաչ գնումները խրախուսելու նպատակով:
- ՀՀ-ում այս ուղղությամբ արդեն իսկ կատարված **դրական միտումներ են նկատվում**:

Իրավական ակտերը

- 2007թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրը»:
- 2010թ. «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի կատարմանն ուղղված ՀՀ կառավարության գործողությունների ծրագիրը»:
- «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ ներառված առաջարկները (ընդունվել է ՀՀ կառավարության 25.12.2015թ. թիվ 1504-Ն որոշմամբ):
- Երևան քաղաքի ավագանու կողմից 2016թ. հունիսի 24-ի թիվ N558-Ն որոշմամբ հաստատված «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը»:
- 2017-2018 թթ. ՀՀ էներգախնայողության գործողությունների ծրագրի 2-րդ փուլ (ՀՀ կառավարության 2017 թ. փետրվարի 2-ի նիստի N 4 արձանագրային որոշում):

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում ՀՕ-122-Ն կատարված փոփոխությունները (առ 12.05.2016թ.)

- Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության պարտադիր տեխնիկական պահանջները պետք է պահպանեն նախագծողները, կառուցապատողները և շահագործման ընդունողները: Էներգախնայողության և էներգաարդյունավետության պարտադիր տեխնիկական պահանջները սահմանում է ՀՀ կառավարությունը:
- Էներգասպառող սարքերի և սարքվածքների պիտակավորման կարգը և պիտակի ձևը սահմանում է ՀՀ կառավարությունը:
- ՀՀ կառավարությունը սահմանում է մարդու կյանքին և (կամ) շրջակա միջավայրին վտանգ սպառնացող (վտանգավոր նյութեր պարունակող) էներգաարդյունավետ սարքերի, սարքվածքների և արտադրանքի ցանկը, այդ ցանկում ընդգրկված էներգաարդյունավետ սարքերի, սարքվածքների և արտադրանքի Հայաստանի Հանրապետությունում շուկայահանման պայմանները՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի համաձայն, ինչպես նաև դրանց շահագործումից հետո օգտահանման կարգը, որոնք պետք է պահպանի յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ:

ԵՏՄ տեխնիկական կանոնակարգեր

- 2016 թ. հունվարի 2-ից ՀՀ-ում ուժի մեջ են մտել ԵՏՄ տեխնիկական կանոնակարգերը՝
 - ՄՄ ՏԿ 004/2011 «Ցածր լարման էլեկտրասարքավորումների անվտանգության վերաբերյալ»,
 - ՄՄ ՏԿ 020/2011 «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիության վերաբերյալ» ԵՏՄ տեխնիկական կանոնակարգերը:
- «Կենցաղային և այլ էներգասպառող սարքերի էներգաարդյունավետության և մակնշման պահանջների վերաբերյալ» կանոնակարգը գտնվում է մշակման փուլում:

ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմեր (1)

Շինարարական նոր նորմերի առավելություններն են՝

- համահունչ են Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի կատարմանն ուղղված ՀՀ կառավարության գործողությունների ծրագրին (ՀՀ կառավարության 04.10.2010թ. թիվ 43 արձանագրային որոշում) և էներգաարդյունավետության ոլորտի եվրոպական դիրեկտիվներին,
- հիմնված են ԱՊՀ Միջպետական շինարարական նորմերի առաջավոր մշակումների վրա,
- հանդիսանում է կարևորագույն նորմատիվային փաստաթուղթ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016թ. մայիսի 12-ին ընդունված «էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվող նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության պարտադիր պահանջների կատարման ապահովման համար,

ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմեր (2)

- սահմանում են պահանջներ շենքի պատող կոնստրուկցիաների ջերմափոխանցման բերված դիմադրության, շենքերի էներգաարդյունավետության ցուցանիշի, շենքերի էներգաարդյունավետության դասի, շենքերի էներգետիկ անձնագրի նկատմամբ,
- նախատեսում են շենքերի էներգետիկ արդյունավետության նոր ցուցանիշների կիրառում (մասնավորապես, շենքերի ջեռուցման համար էներգիայի տեսակարար պահանջարկը),
- նախատեսում են շենքերի էներգետիկ արդյունավետության գնահատում և դասակարգում, ինչպես նախագծման և կառուցման, այնպես էլ հետագա շահագործման ընթացքում,
- ապահովում են օգտակար ջերմային էներգիայի պահանջարկի նույն մակարդակը, ինչ ՀՀՇՆ II-7.02-95-ը (2000թ. փոփոխություններով), ընձեռելով ավելի լայն հնարավորություններ՝ նորմերի պահանջների կատարման մոտեցումների և տեխնիկական լուծումների ընտրության համար:

ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» (1)

Շինարարական նոր նորմերի առավելություններն են՝

- համահունչ են Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի կատարմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության գործողությունների ծրագրին (ՀՀ կառավարության 10 հոկտեմբերի 2010 թվականի թիվ 43 արձանագրային որոշում), 2017-2018 թվականների Հայաստանի Հանրապետության էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլին (ՀՀ կառավարության 2 փետրվարի 2017 թվականի N 4 արձանագրային որոշում) և էներգաարդյունավետության ոլորտի եվրոպական դիրեկտիվներին,
- հիմնված են ԱՊՀ Միջպետական շինարարական նորմերի առաջավոր մշակումների վրա,
- լրացնում և արդիականացնում են տերմինները և սահմանումները, նորմատիվ վկայակոչումները,
- ավելի մանրամասնեցնում են բնական և համատեղված լուսավորումը,
- սահմանափակում են ոչ էներգաարդյունավետ լույսի աղբյուրների կիրառումը արհեստական լուսավորման համար,

ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» (2)

- սահմանում են արտադրական սենքերի արհեստական լուսավորության առավելագույն թույլատրելի սահմանային տեսակարար հզորությունները,
- սահմանում են կանթեղների տեղադրման նվազագույն բարձրությունը,
- կատարելագործում են շենքերից դուրս աշխատանքների կատարման տեղերի, ինչպես նաև կազմակերպությունների տարածքների լուսավորման առավելագույն թույլատրելի տեսակարար հզորությունները և նվազագույն պահանջվող լուսավորվածությունը,
- արդիականացում են արտադրական լուսավորման կառավարումը,
- արդիականացում են ճանապարհային/փողոցային ցանցի դասակարգմանը համապատասխան պայծառության, լուսավորության և դրանց համասեռության մեծությունները,
- բարձրացնում են քաղաքային ճանապարհների/փողոցների լուսավորության նորմավորվող ցուցանիշները,
- բարելավում են բնակեցման տարածքների արտաքին լուսավորությունը, հետիոտների, թունելների, ինչպես նաև վթարային և պահուստային լուսավորության պահանջները,
- ներկայացնում են տարհանման և վթարային լուսավորության մանրամասն գծագրերը, շինարարական ապակիների գործակիցները,

«Կանաչ գնումների» համակարգի ներդրման կարճաժամկետ հեռանկար (2017-2018թթ.)

1. ԼՍ համապատասխանության պարտադիր գնահատման ցանկերի ճշտում:
2. ԷԱ անհամապատասխան էլ. սարքավորումների շուկայից աստիճանական դուրս մղման մեխանիզմների սահմանում:
3. Ազգային ստանդարտների արդիականացում:
4. Լաբորատորիաների հավատարմագրում ISO 17025 համապատասխան
5. ԵՏՄ կանոնակարգերի ընդունմամբ ազգային օրենսդրության արդիականացում:
6. Գնման առարկայի ձեռք բերում, ըստ պարտադիր հավաստման ենթակա ապրանքների ցանկի:
7. ՆԷԿՍ (նվազագույն էներգետիկ կատարողական ստանդարտ, MEPS) մոտեցումների կիրառում ըստ սահմանված ԷԱ դասակարգիչների ԼՍ տեխնիկական բնութագրերի առավել ճշգրիտ ներկայացում:
8. Գնման ընթացակարգերում տեխնիկական բնութագրերի ճշգրտում:
Ապակենտրոնացած մոդելում՝ տեխ.բնութագրեր մշակող պատվիրատուի անձնակազմի կարողությունների զարգացում:

«Կանաչ գնումների» համակարգի ներդրման կարճաժամկետ հեռանկար (2017-2018թթ.)

9. Գնման առաջարկների գնահատման փուլում՝ նվազագույն գնային առաջարկից դեպի առավել շահեկան առաջարկի կիրառման մեխանիզմների սահմանում (գնայինից դեպի ոչ գնային տարբերակ).
 - Նվազագույն էներգետիկ կատարողականի հիման վրա՝ համապատասխանության չափանիշների պարտադիր կիրառում և ԼՍ ԷԱ պիտակավորման պայմանների ապահովում:
 - Գնման առարկայի ինքնարժեքի հաշվարկման հստակ մեխանիզմների սահմանում
10. Գնումների պլանավորման աջակցման մեխանիզմների սահմանում՝ այնպիսի գործիքների կիրառմամբ, որոնք կնպաստեն երկարաժամկետ պլանային տնտեսության վարմանը, էներգակառավարման ինստիտուտի ներդրմանը և գնումների պլանների մշակմանը հիմնված հետգնման հաշվարկի վրա:
11. ԼՍ շահագործման «կյանքի ցիկլում» ողջ ընթացքում հաշվարկված արժեքի (life cycle cost) հաշվարկի կիրառում (պլանավորման կամ նախագծային փուլում)՝ հիմնված հետգնման արդյունավետության վրա:
12. ՀՀՇՆ արդիականացում, լուսատեխնիկական հաշվարկների և մոդելավորումների ընթացքում DIALux կամ Relux համակարգչային ծրագրերի օգտագործում և այն կիրառելու համար կարողությունների զարգացման գործընթաց:

«Կանաչ գնումների» համակարգի ներդրման կարճաժամկետ հեռանկար (2017-2018թթ.)

13. Թունելային ԷԱ լուսավորության համակարգերի նախագծման և արդիականացման ապահովում: ԷԱ համակարգի ներդրման ուղղությամբ ժամանակակից մոտեցումների կիրառում:
14. «Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի շրջանակում մշակված՝ «Ավտոմոբիլային թունելների լուսավորության ուղեցույցի» վերաբերյալ տեղեկատվության տարածում:

«Կանաչ գնումների» համակարգի ներդրման երկարաժամկետ հեռանկար (2019-2020թթ.)

- Իմպերատիվ նորմերի մշակման անհրաժեշտություն՝
 15. Հանրային գնման ընթացակարգերում արգելանքի սահմանում՝ համաձայն որի պետության և համայնքային կարիքների համար ԷԱ չափանիշներին անհամապատասխան, ինչպես նաև սնդիկի պարունակությամբ լուսատեխնիկական ապրանքների ձեռք բերումը կարգելվի
 16. Օգտագործման սահմանափակում
 17. Համապատասխանության հավաստագրման նոր ստանդարտների ներդրում
- Փոփոխություններ՝ «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին», «Գնումների մասին» ՀՀՕ, այլ հարակից կանոնակարգեր
- 18. Պատվիրատուների կողմից գնման ընթացակարգերում ԷԱ արդյունավետությանը և «կանաչ» գնումների սահմանմանը ուղղված միջոցառումների իրականացման և վերահսկման մեխանիզմների ներդրում: ԳԱԿ-ի կողմից վերահսկման ուժեղացում: Փոփոխություններ «Գնումների մասին» ՀՀՕ, ՖՆ հրամաններում:

«Կանաչ գնումների» համակարգի ներդրման երկարաժամկետ հեռանկար (2019-2020թթ.)

19. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխությունների սահմանում՝ համաձայն որի ԼՍ ԷԱ չափանիշներին անհամապատասխան գնումների կազմակերպման համար վարչական պատասխանատվության կիրառում:
20. «Գնումների մասին» ՀՀ օրենքում «կանաչ» գնումների հասկացության սահմանում, համաձայն որի պետական կամ համայնքային կարիքների համար ձեռք բերվող ապրանքների նախապատվության իրավունքի սահմանում՝ բնապահպանական և էներգախնայողության չափանիշներից ելնելով:
21. «Կանաչ» գնումների խրախուսման նպատակով ներքին շուկայում արտադրվող և ներկրվող ապրանքների նկատմամբ ազգային քաղաքականության մշակում, էկոպիտակների կիրառման մեխանիզմների սահմանում՝ համաձայն ԵՄ չափորոշիչների

Կանաչ գնումներին՝ կանաչ ճանապարհ:

Շնորհակալություն ուշադրության համար